

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Հակակարկտային կայանների աշխատանքները վերահսկվում են



ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ու ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն այցելել են Արագածոտնի և Լոռու մարզեր՝ հակակարկտային և ռադիոլոկացիոն կայանների ընթացիկ աշխատանքները դիտարկելու և պատրաստվածության վիճակը ստուգելու նպատակով: Նախարարների ուղեկցում էր Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը: Նախարարների այցի առաջին կանգամն Արտաշավան համայնքում էր, որտեղ տեղակայված է հանրապետությունում գործող ռադիոլոկացիոն կայաններից մեկը:

ՀՀ ՏԿՄԻՆ «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Կարապետյանի ներկայացմամբ, հանրապետության 412 պետական և համայնքային սեփականության հակակարկտային կայանները գտնվում են այդ կայանի տեսողատում: Արտաշավանի ռադիոլոկացիոն կայանի կողմից ամբողջությամբ վերահսկվում են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի տարածքները: Մարտի 30-ին Երևանում և մայրաքաղաքին հարող հատվածներում տեղացած կարկուտի ժամանակ կայաններից արձակվել են կրակոցներ, ինչը թույլ է տվել մեղմել կարկուտի հետևանքներն ու խուսափել վնասներից: «Թեև ցրտահարության հավանականությունը հանրապետությունում արդեն նվազել է, սակայն կարկտահարությունների հավանականությունը շարունակում է պահպանվել, ուստի, տեղումների դեպքում, հարկավոր է միջոցներ ձեռնարկել՝ դրա հետևանքները մեղմելու ուղղությամբ: Այդ պարագայում գյուղատնտեսական հաջող տարվա ակնկալիքներն այս տարի խնկապես կարդարանան», - նշել է Սերգո Կարապետյանը:

Ֆ 2

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Համակարգը պատրաստ է աշխատանքներին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն անցկացրել է հերթական աշխատանքային խորհրդակցությունը, որին մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը, Զրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանը, Սննդամթերքի անվտանգության ծառայության պետ Արմեն Հայրապետյանը, նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև համակարգում ընդգրկված կառույցների ղեկավարները:

Խորհրդակցության սկզբում նախարարը աշխատակազմին և ներկայացրել ջրային տնտեսության պետական կոմիտեի նորանշանակ նախագահ Արամ Հարությունյանին: Ընդհանրապես պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ նախարարը մասնավորապես նշել է, որ համատեղ աշխատանքի միջոցով հնարավոր կլինի արդյունավետ լուծումներ տալ համակարգի առջև ծառայած խնդիրներին, որպեսզի այս տարի ոռոգման համակարգի գործունեության հետ կապված դժգոհություններ և բողոքներ չլինեն: Նախարարը նաև ընդգծել է, որ այս ոլորտում արդեն իսկ զգալի աշխատանք է կատարվել, որի արդյունքում այս տարի ոռոգման համակարգը մարտի 1-ից արդեն իսկ ամբողջությամբ պատրաստ է եղել ոռոգման սեզոնին: «Առատ տեղումները բարենպաստ իրավիճակ են ստեղծել գյուղատնտեսության համար, ջրամբարները լցվում են, և բոլոր գործունեներն առկա են ոռոգման սեզոնը պատշաճ կազմակերպելու համար: Այս պահին մեր հիմնական խնդիրը պետք է լինի ոռոգման ջրի ժամանակին և արդարացի բաշխման կազմակերպումը», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Այնուհետև փոխնախարարները ներկայացրել են համակարգման ոլորտներում կատարված ընթացիկ աշխատանքներն ու խնդիրները: Նախարարը պատասխանատուներին հորդորել է ուշադրության կենտրոնում պահել անասնաբուժության ոլորտում առկա խնդիրները՝ պատշաճ կերպով և ժամանակին կազմակերպելով պատվաստումները: Հանձնարարվել է նաև առանձնահատուկ ուշադրության դարձնել մթերումների կազմակերպման՝ մասնավորապես կաթի մթերման գների նվազեցումներ թույլ չտալու հարցերին: ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը զեկուցել է, որ հանրապետությունում դիտվող անձրևի, իսկ բարձրադիր գոտիներում՝ նաև ձյան տեսքով տեղումները որևէ անհանգստության տեղիք չեն տալիս և բերքին վնաս չեն կարող հասցնել:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Նորանշանակ նախագահ՝ Զրային տնտեսության պետական կոմիտեում

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմին և ներկայացրել կոմիտեի նորանշանակ նախագահ Արամ Հարությունյանին:

Բարձր գնահատելով Արամ Հարությունյանի փորձառությունը և մասնագիտական գիտելիքները՝ վարչապետը նշել է, որ Զրային տնտեսության պետական կոմիտեից ակնկալում է արդյունավետ աշխատանք՝ ՀՀ կառավարության նախանշած մի շարք ուղղություններով: «Մենք այս տարի ունենք մի քանի կարևոր ուղղություններ, օրինակ, ջրամբարաշինությունը: Առաջնահերթ պետք է ուշադիր և հետևողական աշխատել հենց այս ուղղությամբ: Համոզված եմ, որ Ձեր փորձը և գիտելիքները կներդնեք, որպեսզի համակարգը լավ աշխատի», - նշել է վարչապետը: Հովիկ Աբրահամյանը կարևորել է նաև ոռոգման համակարգի բարելավման, ջրառի կազմակերպման, ինչպես նաև կառույցի մյուս գերակա խնդիրների լուծման ուղղությամբ հետևողական աշխատանքը: Վարչապետը նշել է, որ ոլորտում շատ անելիքներ կան, կոմիտեում արդեն ձևավորվել է փորձառու թիմ, որն ի վիճակի է, սոր նախագահի գլխավորությամբ, լուծելու ջրային տնտեսության խնդիրները:

Կառավարության ղեկավարը շնորհավորել է Արամ Հարությունյանին և մաղթել բեղմնավոր աշխատանք: Իր հերթին Արամ Հարությունյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ նախագահին ու վարչապետին՝ վստահության համար և հավաստիացրել, որ թիմային աշխատանքով կկարողանան արդյունավետ աշխատել ու հաջողություն արձանագրել:

Կառավարությունն ընդունել է «Գույք նվիրաբերելու մասին» որոշումը, որի իրագործումը հնարավորություն կտա Վայոց ձորի մարզի հսնորուտ և Նոր Ազնաբերդ սահմանամերձ համայնքներում կառուցել ոռոգման ինքնահոս ջրագծեր և լուծել ալվելի քան 84 հեկտար հողերի ոռոգման հարցը: Անհրաժեշտ տրամադրված խողովակները վերցվելու են 1982-1984թթ. կառուցված, ներկայումս չափազանց քայքայված պոմպակայանի խողովակաշարերից:

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ

Սերմացուն տրամադրվել է հողօգտագործողներին

Պետական օժանդակության ծրագրերի շրջանակում, 2015 թվականին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից, հանրապետություն են ներկրվել գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի սերմացուներ, որոնց վերջին խմբաքանակը վերջերս Մասիսում գտնվող պահեստից ուղարկվեց Ծիրակի և Արագածոտնի մարզեր:

Մասնավորապես՝ 1013.8 տոննա գարնանացան գարու, 5.275 տոննա եգիպտացորենի, 59.24 տոննա առվույտի և 247.825 տոննա կորնզանի սերմացու և ներկրվել Ռուսաստանի Դաշնությունից: Եվս 120 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու գնվել է տեղական սերմարտադրողներից՝ «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից: Գարնանացան սերմացուի վերջին խմբաքանակը ներմուծվել է մարտի 20-ին:

Ֆ 2

Չկալովկայում ավելացնում են անասնազլիաբանակը

Էջ 4

Միրանի գենետիկ ռեսուրսների պահպանում եւ օգտագործում

Էջ 5

Տավարի մսի արտադրության ավելացման պահուստները

Էջ 6

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Հակակարկտային կայանների աշխատանքները վերահսկվում են

Ռադիոլոկացիոն կայանի աշխատանքներին ծանոթանալուց հետո, նախարարներն այցելել են նաև Արտաշավանի հակակարկտային կայան, որը լիցքավորված է և գտնվում է պատրաստ վիճակում: Նախարարների ներկայությամբ կայանից իրականացվել են փորձնական կրակոցներ: «Ռադիոլոկացիոն կայանների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում և, հայ-ռուսական համագործակցության արդյունքում՝ նախատեսվում է հանրապետությունում դրանց թիվն ավելացնել ևս 7-ով, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ կառավարել հակակարկտային կայանները: Հանրապետության բոլոր 412 հակակարկտային կայանները տեսանելի են Երևանից և կառավարվում են ինչպես կենտրոնական, այնպես էլ՝ մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններից, բոլորը լիցքավորված են և բերված պատրաստակառության բարձր վիճակի», - հայտնել է նախարար Արմեն Երիցյանը:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կայանների աշխատանքը՝ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը հանձնարարել է սեղմ ժամկետում բարեկարգել նաև կայանների հարակից տարածքները: Այնուհետև նախարարները, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ, այցելել են Դսեղի ռադիոլոկացիոն կայան, որը սպասարկում է Լոռու, Շիրակի, Տավուշի, մասամբ՝ նաև Արագածոտնի մարզերը: Ռադիոլոկացիոն կայանը դիտարկում է 300 կմ շառավղով տարածք, իսկ կրակոցներ կարող է իրականացնել 150 կմ շառավղով: Լոռու մարզում առկա են 33, Շիրակում՝ 56, Տավուշում՝ 3 հակակարկտային կայաններ:

ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը հետաքրքրվել է, թե ինչ մակարդակի վրա է մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնների հետ համագործակցությունը, ինչին ի պատասխան, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը տեղեկացրել է, որ համագործակցությունը բավականին բարձր մակարդակի վրա է, և ցանկացած տեղեկատվություն զեկուցվում է անձամբ իրեն:

Արմեն Երիցյանը հանձնարարել է ՏԿԱԻ «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Կարապետյանին՝ արտակարգ իրավիճակների դեպքում տեղեկացնել նաև ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին:

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ

Սերմացուն տրամադրվել է հողօգտագործողներին

Սերմացուն տրամադրվել է հողօգտագործողներին՝ 2015 թվականի գարնանացանի աշխատանքները ժամանակին կատարելու համար՝ ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների տեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Մանուկյանը: Նրա խոսքով՝ մարզերի կողմից սահմանված կարգով ներկայացված վճարու-



րի և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման նպատակով: «Սերմացուն հողօգտագործողներին հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով: Մասնավորապես՝ գարնանացան գարու 1 կգ-ը ձեռք է բերվել 324.6 դրամով, որը հողօգտագործողներին է տրամադրվել 130 դրամով, եգիպտացորենի 1 կգ-ը՝ 932.5 դրամով, որը տրամադրվել է 350 դրամով, առվույտը՝ 2695 դրամով, տրամադրվել է 1500 դրամով և կորնզանը՝ 562.9 դրամով, տրամադրվել է 370 դրամ», - նշել է ՀՀ գյուղատն-

ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԳԱՄԿ-երի գործունեության քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի նախաձեռնությամբ, խորհրդակցություն է անցկացվել գյուղատնտեսության աշակցության մարզային կենտրոնների գործունեությանն առնչվող խնդիրների քննարկման նպատակով: Խորհրդակցությանը մասնակցել են՝ նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանը, նախարարության աշխատակազմի ղեկավար Արտաշես Կիրակոսյանը, գյուղատնտեսության աշակցության հանրապետական և մարզային կենտրոնների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք:



Հանդիպմանը մասնավորապես քննարկվել են ԳԱՄԿ-երի ընթացիկ աշխատանքները, նրանց բնական գործունեությանը խոչընդոտող խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները: «Գյուղատնտեսության աշակցության մարզային կենտրոնները պետք է եականորեն բարձրացնեն իրենց գործունեության արդյունավետությունը և առավել մեծ պատասխանատվությամբ վերաբերվեն իրենց պարտականությունների կատարմանը», - նշել է նախարարը:

Ըստ նախարարի՝ հարկավոր է հաճախակիացնել այցելությունները համայնքներ և ֆերմերային տնտեսություններ՝ գյուղացիներին մտահոգող խնդիրներին տեղում ծանոթանալու և արդյունավետ խորհրդատվական ցուցումներ տալու համար:

Նախարարը նաև տեղեկացրել է, որ առաջիկայում Հայաստան է ժամանելու ֆրանսիացի փորձագետների մի խումբ, որն ուսումնասիրություններ կկատարի ԳԱՄԿ-երում և կներկայացնի ոլորտի զարգացման տեսլականը:

Անդրադառնալով ԳԱՄԿ-երի ինքնաֆինանսավորման խնդրին՝ նախարարը հորդորեց կենտրոնների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել առաջիկա տարիներին ԳԱՄԿ-երի պահպանության ծախսերը սեփական եկամուտների հաշվին ապահովելու ուղղությամբ:

ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԴՍՈՒՄՑ

Ընթացիկ տարվա աշխատանքները

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանն այցելել է Վայոց ձորի մարզ՝ մթերումների գործընթացին առնչվող խնդիրների քննարկման նպատակով:



Այցի շրջանակում, փոխնախարարն այցելել է մարզի տարածքում տեղակայված խաղող վերամշակող «Արենի գինու գործարան», «Հին Արենի», «Գետնատուն», «Մեծ Սյունիք», «Գինեքար», ինչպես նաև կաթ վերամշակող «Գուլեն Գոուլթ» ընկերություններ:

Ընկերությունների ղեկավար կազմի հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են ընթացիկ տարվա գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացների կազմակերպման նպատակով իրականացվելիք միջոցառումները, առկա խնդիրներն ու դրանց լուծման առավել արդյունավետ ուղիները:

Փոխնախարարը հատկապես ընդգծել է գյուղացիական տնտեսություններից գնված հումքի դիմաց կատարվող վճարումների ժամանակին ավարտման գործընթացների ապահովումը և հորդորել ակտիվացնել հումքի մթերման պայմանագրերի կնքման աշխատանքները:

Քննարկվել են նաև վերամշակող ընկերությունների գործունեության ծրագրերը, ինչպես նաև՝ մթերումների գործընթացի կազմակերպմանն առնչվող այլ հարցեր:

ԾԱՌԱՏՈՒՆԿ

Մասնակցել է նաև գյուղատնտեսության նախարարության աշխատակազմը

Երևան քաղաքում հայտարարված համաքաղաքային շաբաթօրյակին և ծառատունկին օրերս իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի, ինչպես նաև համակարգի կառույցների աշխատակիցները, ովքեր ծառեր են տնկել մայրաքաղաքի Նորջր-Մարաշ և Նոր Նորջր համայնքներում:

Կարևորելով նմանատիպ միջոցառումների կազմակերպումն ու դրանց հանրության ակտիվ ներգրավվածությունը, ինչպես նաև՝ հանրապետությունում կանաչ տարածքների վերականգնումն ու ընդլայնումը, այս տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ կապված, հանդես է եկել նախաձեռնությամբ, որի շրջանակում, «Հայաստամ» ՊՈԱԿ-ի միջոցով, անհատույց բարձրարժեք ծառատեսակների տնկիներ են տրամադրվում համայնքներին՝ հանրապետության ամբողջ տարածքում լայն թափով ծառատունկ իրականացնելու նպատակով:

Այդ նախաձեռնության շրջանակում, «Հայաստամ» ՊՈԱԿ-ի կողմից մինչ օրս, գարնանային ծառատունկի շրջանակում, հանրապետության մի շարք համայնքների հատկացվել են շուրջ 170 հազար տարբեր ծառատեսակների, այդ թվում՝ կենսածառի, սոճու, ուռնետու, շագանակետու, հացետու, ընկուզենու, կարնու և այլ տնկիներ: Երևանի քաղաքապետարանին կազմակերպված ծառատունկի համար հատկացվել է շուրջ 12 500 տնկի, նույնքան տնկիներ նախատեսվում է տրամադրել ապրիլ ամսվա ընթացքում:

Բացի այդ, անտառային տնտեսությունների ջանքերով, արդեն իսկ այս տարի հանրապետության անտառային տարածքները համալրվել են ավելի քան 35 000 նոր ծառերով: Շուրջ 1300 հատ բարձրարժեք ընկուզենու տնկիներ նախատեսվում է տրամադրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ Շուշիի տարածաշրջանում ծառատունկ իրականացնելու նպատակով:

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ Ե ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ 45 ՍԱՀԱՄԱՆԱՍԵՐԶ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Վերջերս ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԾ) հայաստանյան գրասենյակը և ՀՀ ՏԿԱԻ նախարարությունը ներկայացրեցին «Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. համայնքների դիմակայունության ամրապնդում» ծրագրի մեկնարկի մասին: Այն իրականացնում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը՝ ՀՀ ՏԿԱԻ նախարարության հետ սերտ համագործակցությամբ և Ռուսաստանի Դաշնության կառավարության ֆինանսավորմամբ:

Ներկայումս ողջունեց ՄԱԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուլգետտոն: Ըստ նրա՝ ՄԱԾ-ն փորձում է Հայաստանի հեռավոր համայնքների համար ապահովել ոչ թե կարճաժամկետ, իրավիճակային օգնություն, այլ՝ աջակցել կայուն զարգացմանը: Ցանկությունը մեկն է՝ երախտագիտություն հայտնել ՀՀ և ՌԴ կառավարություններին՝ գերազանց համագործակցության և խոցելի համայնքներին աջակցելու համար:

ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանն իր խոսքում ընդգծել է, որ գրեթե բոլոր նախաձեռնություններում ՄԱԿ-ը մշտապես եղել է նախարարության կողմից:

Հայաստանում ՌԴ դեսպան Իվան Վոլինսկինը տեղեկացրել է, որ ներկայումս, ՌԴ կառավարության օժանդակությամբ,

ՄԱԾ-ն մի քանի նման ծրագիր է իրականացնում նաև Արցախի ներքինում:

Բրեդլի Բուլգետտոնի կարծիքով՝ իրենք կարևորում են այն փաստը, որ ծրագիրն ուղղված է սահմանամերձ համայնքների համահավասար զարգացմանը և հուսով են՝ այն կօգնի Հայաստանին՝ հասնելու իր առջև դրված նպատակներին: Ծրագրի մեկնարկը հավաստող փաստաթղթերը ստորագրել են Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուլգետտոն, ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը և Հայաստանում ՌԴ դեսպան Իվան Վոլինսկինը: Տավուշի փոխմարզպետ Լևոն Սարգսյանը նշել է, որ այս ծրագիրը համահունչ է թե՛ համայնքների զարգացման պլաններին, թե՛ մարզում առկա խնդիրներին, ուստի ծրագրի ավարտին ակնկալում են լավ արդյունքներ արձանագրել:

Գյուղական զարգացման ծրագիրը տարբեր ուղղություններով օժանդակելու է Տավուշի մարզի 45 սահմանամերձ համայնքների, որն իր մեջ ներառում է բնակիչների ներգրավում համայնքների զարգացման ծրագրերի մշակմանը, ուսուցում, աջակցություն գյուղատնտեսական ոլորտին, ենթակառուցվածքների վերականգնում, եկամուտ ստեղծող ծրագրեր և այլն:

ՎԱՅՈՑ ԶՈՐ

ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԿԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Անասնաբուծության զարգացման նպատակով, Վայոց ձորի մարզի Գնդեվազ համայնքում կառուցվում է խոշոր եղջերավոր անասունների պահպանման ֆերմա՝ 350 գլուխ կաթնապուր կովի և 150 գլուխ երնջի համար: Զուգահեռաբար գործելու է նաև կաթի մթերման և վերամշակման ձեռնարկությունը: Մարզի Զատիթափ համայնքում շահագործման է հանձնվել ժամանակակից սպանդանոց, որն իր ամբողջ հզորությամբ կաշխարհի ընթացիկ տարում:

Վայոց ձորում գործնական արժեքավոր ծրագրեր են իրականացվում նաև թռչնաբուծության ուղղությամբ: Գնդեվազի վերագործարկված թռչնաբուծական ֆաբրիկայում ներկայումս բուծվում են 44 հազար ածան հավեր՝ օրական 35 հազար ծու արտադրողականությամբ: Թռչնաֆաբրիկայում աճեցվում են նաև 24 հազար վառեկներ: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ,



յամբ, մարզում առկա է 22578 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 9639 գլուխ, մանր եղջերավորների թիվը հասնում է շուրջ 25 հազար, խոզերինը՝ 2050 գլխի: Մարզում զարգացած է նաև մեղվաբուծությունը, մեղվաընտանիքների թվաքանակն արդեն մոտենում է 22 հազարի: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մարատ Ներսիսյանի գնահատմամբ, Վայոց ձորում անասնաբուծության զարգացման միտումը շարունակվում է: Վարչության պետի կարծիքով՝ ճյուղի զարգացմանը կնպաստեն նաև մարզում իրականացվող աջակցության ծրագրերը:

նի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մարատ Ներսիսյանի գնահատմամբ, Վայոց ձորում անասնաբուծության զարգացման միտումը շարունակվում է: Վարչության պետի կարծիքով՝ ճյուղի զարգացմանը կնպաստեն նաև մարզում իրականացվող աջակցության ծրագրերը:

ԼՈՌԻ

ԼՈՌԻՈՒՄ ՀՈՂԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Գյուղատնտեսական ցանքադրածքները Լոռու մարզում 2014 թ.-ին ավելացել են 1412,7 հեկտարով՝ կազմելով 28650,7 հա (օգտագործվել է ընդհանուր տարածքի 68 %-ը): Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը 251154 հեկտար են, որոնցից 42095,8 հա վարելահողեր են, 35125,5 հա՝ խոտհարքներ, 14709,4 հա՝ արոտներ և 27790,5 հա-ն՝ այլ հողատեսքեր: Բազմամյա տնկարկները հասնում են 418 հեկտարի:

Համաձայն 2014թ. մարզային հողային հաշվեկշռի՝ մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են շուրջ 9612 հա, որն ընդհանուր վարելահողերի 22,82 %-ն է: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության տվյալներով՝ մեխանիկական եղանակով, մարզում ոռոգվում են 2595, ինքնահոս՝ 5508 հա հողատարածքներ: Ավելի քան 1509 հա վառելահողեր:

ՍՅՈՒՆԻՔ

ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ԵՆ ՆԱԽԻՐՆԵՐԻ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Սյունիքի մարզում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել է 7,6, մանրինը՝ 12,9, խոզերինը՝ 5,8 %-ով: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանի տեղեկացմամբ, անասնաբուծական ծառայության հետ համարելով, վերահսկվել և համակարգվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարող կանխարգելիչ միջոցառումների աշխատանքները:

«Չանգվածային հիվանդություններ չեն արձանագրվել: Մարզում անասնաճարակային վիճակը կայուն է, կանխարգելիչ միջոցառումներն արվում են ժամանակին, քանի որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պատվաստանյութերը հատկացվում են ժամանակին», - նշում է պարոն Թանգյանը:



Մարզում զգալի աշխատանքներ են տարվում նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ցուցանիշների բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով, արհեստական սերմնավորման ճանապարհով, բարելավվում են նախիրների տոհմային հատկանիշները: Անցած գյուղատնտեսական տարում մարզում կատարվել է 1000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների

արհեստական սերմնավորում: Սյունիքում գործում են տոհմային 3 խոշոր տնտեսություններ, որոնց աճեցրած մատղայններով համարվում են ֆերմերային տնտեսությունները: Զարգացած անասնաբուծություն ունեցող մարզի համար ճյուղի առաջնությունը նպաստելու հեռանկարային նոր ծրագրեր են մշակվում:

Մարզային լուրերը՝ Նեյի Սահակյան

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

Ծրագիր՝ ի նպաստ կարողությունների հզորացման

Վերջերս տեղի ունեցավ «Գյուղատնտեսության ոլորտի ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով աշխատաժողով, որը կազմակերպել էր Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան՝ «Ակտիվ կանայք Հայաստանի գյուղական համայնքներում» ծրագրի շրջանակներում:

Աշխատաժողովին մասնակցում էին ծրագրի շահառուները՝ ֆերմերներ, գյուղմթերքներ արտադրող, վերամշակող և վարկային կազմակերպությունների, ոլորտի այլ շահագրգիռ պետական և ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ: Աշխատաժողովի շրջանակներում, անդրադարձ կատարվեց սննդի անվտանգության և որակի ապահովման, սպառման շուկաների և գյուղատնտեսության համար ֆինանսական ռեսուրսների մատչելիության խնդիրներին: Քննարկումների ընթացքում մասնակիցները մատնանշեցին մի շարք հիմնախնդիրներ ու դրանց լուծման ուղիները: Դրանք հիմնականում վերաբերում էին գյուղմթերքների ստանդարտացման թերի համակարգին, սպառման հետ կապված՝ ներքին շուկայի և արտասահման, գյուղատնտեսության մեջ կոոպերացիայի խթանման և ֆինանսական ռեսուրսների մատչելիության՝ գյուղացիների համար վարկավորման ընդունելի պայմանների ապահովման (վարկային ցածր տոկոսադրույքներ, տոկոսադրույքի սուբսիդավորում, գրավադրման պայմաններ և այլն) խնդիրներին: Աշխատաժողովի շրջանակներում, տեղի ունեցավ նաև «Դեղին էջեր» տեղեկատվական գրքույկի շնորհանդեսը,

որտեղ ամփոփված է տեղեկատվություն՝ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների և անհատների մասին:

Ծրագիրը մեկնարկել է դեռևս 2012թ. արտոնից՝ «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի» կողմից (ՀԵԿԱ) Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ գործակցությամբ, «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի» ծրագրի շրջանակներում: Այն նախատեսված էր Երևան, Աշտարակ, Արարատ քաղաքների և դրանց հարակից բնակավայրերի կին գյուղատնտեսների, գյուղական համայնքային կազմակերպությունների, գյուղատնտես կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի համար: «Ծրագրի նպատակն էր՝ խրախուսել կին գյուղատնտեսներին ու հզորացնել նրանց կարողությունները: Այն ուղղված էր ոլորտում գործող կողմերի (արտադրող-վերամշակող և ֆինանսական կազմակերպություններ) միջև գործընկերային հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև՝ միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորմանը», - ասում է ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Ծրագրի իրականացման ընթացքում, շահառուների համար պարբերաբար կազմակերպվել են նպատակային ուսուցողական դասընթացներ, մատուցվել խորհրդատվություն, որոնք նպաստել են գյուղատնտեսության ոլորտում մասնակիցների գիտելիքների և ունակությունների զարգացմանը:

Նեյի Սահակյան

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՉԿԱԼՈՎԿԱՅՈՒՄ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ

Չկալովկան Գեղարքունիքի մարզի այն փոքրաթիվ համայնքներից է, որտեղից արտագնա աշխատանքի մեկնողները գրեթե չկան: Երիտասարդները մնում են գյուղում, զարգացնում անասնապահական փոխափոխությունները: Նշանակում է՝ նպատակ կա, որն ավելի է իմաստավորվում՝ պեղական աջակցության ծրագրերի իրականացումով:

Արդեն 4-րդ տարին է, համայնքում շարունակվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» («ԾԻԳ») ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը: Վերջինիս առանցքային խնդիրն արտավայրերի ջրարբիացումն էր, քանի որ գյուղն ունի զարգացած անասնապահություն: «Գյուղի ամենամտահոգող հիմնախնդիրը հեռագնա արտավայրերում խմելու ջրի բացակայությունն էր: Կենդանիները ստիպված կեսօրից հետո իջնում էին սարերից, հասնում Սևանա լիճ՝ ջուր խմելու: Հետո հետ չէին վերադառնում հեռագնա արտավայրեր, իսկ երեկոյան՝ գյուղ էին հասնում թերսնված: Բնականաբար, նման պայմաններում, բարձր կաթնատվության մասին խոսք անգամ լինել չէր կարող», - պատմում է «Չկալովկա համայնքի արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Ալիկ Դուկասյանը:

Չկալովկայում բնակչության հիմնական եկամուտը ստացվում է անասնապահությունից: Թերևս, այն նույնը առաջընթաց, քանի որ մի շարք խնդիրներ խոչընդոտում էին ճյուղի զարգացմանը: Դժվարությամբ էր կուտակվում կենդանիների ծմեռման համար անհրաժեշտ սննդի պաշարը, քանի որ չկային խոտհնձիչներ, հակավորող սարքեր, և առհասարակ՝ որևէ տեխնիկա: Օրհասական խնդիր էր դարձել ճյուղի զարգացման և արդյունավետության բարձրացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: «Տեղեկանալով ծրագրի մասին՝ գյուղաբնակները դիմեցին համապատասխան կառույցներին: Դրան հաջորդեց մեր մասնագետների այցը գյուղ, որտեղ, մշտադիտարկումներ կատարելուց հետո, որոշում կայացվեց արտավայրերի բարելավման ծրագիր իրականացնել, միաժամանակ՝ ըստ պահանջարկի, տրամադրել նաև գյուղատնտեսական տեխնիկա: Ընդհանրապես, կոոպերատիվ ստեղծելու գաղափարը դուր եկավ գյուղացիներին: Նրանք արագ համայնքվեցին», - հիշում

է «ԾԻԳ» ՊՀ-ի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բադալյանը:

Ծրագրի տրամադրած միջոցներով արդեն արվել են գործնական քայլեր. 1329,35 հա արոտավայրերի ջրարբիացման նպատակով, կառուցվել է 4750 մ երկարությամբ ջրագիծ, տեղադրվել՝ պոմպ, որով ջուրը մղվում է սարերը, ինչպես նաև՝ 2 խմոց: Հատկացվել է 2 հատ հակավորող սարք, խոտհնձիչ և այլ գյուղգործիքներ: Սարերում մշտական ջրապահովածության համար տեղադրվել են ջրատարողություններ: Մինչ օրս շինարարական աշխատանքների վրա ծախսվել է 90 մլն դրամ: Շոշափելի արդյունքներն արդեն ակնհայտ են: «Բարձրացել է կենդանիների թե՛ կաթնատվությունը, և թե՛ մթերատվությունը: Արոտավայրերի ջրարբիացումից հետո, միջին հաշվով, մեկ կովի կաթնատվությունն ավելացել է 3 լիտրով: Ինքս էլ եմ զբաղվում անասնապահությամբ, և համեմատություն կատարելով՝ հստակորեն կարող եմ ասել, որ դրական տեղաշարժեր կան: Ծրագրի առավելություններից մեկն էլ կոոպերատիվի կողմից մատչելի գներով ծառայություններ կատարելն է: Օրինակ, խոտի մեկ հակ պատրաստելու համար գյուղացին հիմա վճարում է 130 դրամ՝ նախկին 150-160 դրամի փոխարեն: Դժվարությունների նվազեցման և եկամուտների ավելացման արդյունքում գյուղում օրեցօր ավելանում է անասնազախաքանակը», - նշում է կոոպերատիվի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Սուրիկ Գրիգորյանը:

Չկալովկայում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը մոտենում է 1000-ի, իսկ մանրինը՝ 1300 գլխի: Որոշ տնտեսություններում կովերի գլխաքանակն արդեն հասել է 30-40 գլխի, իսկ ընդհանրապես, յուրաքանչյուր տնտեսություն խնամում է միջինը՝ 20-25 խոշոր եղջերավոր կենդանիներ, հիմնականում՝ կովեր: «Ցանկացած ծրագիր դժվարությամբ է ներդրվում, դժվարը՝

սկսելն է: Կոոպերացիայի գաղափարախոսությանը ծանոթանալուց հետո, գյուղացիները միահամուռ որոշեցին, որ այն



անպայման պետք է կյանքի կոչել, այլապես՝ գյուղապետարանի սուղ միջոցներով երբևէ հնարավոր չէր իրականացնել այդպիսի խոշոր և ծախսատար ծրագիր», - ասում է գյուղապետ Երվանդ Կարապետյանը:

Գյուղի 139 տնտեսություններից 102-ը կոոպերատիվի անդամներ են: «Ցանկացած ծրագրի գնահատականը որոշվում է ստացված արդյունքով: Գյուղացիական տնտեսությունների միավորումը նպաստեց ֆերմերների եկամուտների ավելացմանը: Գյուղացին տեսնում է, որ իր աշխատանքը, կոոպերատիվի ստեղծման արդյունքում, դարձել է առավել շահավետ: Բացի այդ, կոոպերատիվի անդամներին ավելի հեշտությամբ է հնավորություն տրվում ձեռք բերել վարկեր, գյուղատնտեսական տեխնիկա, իսկ առաջացող խնդիրների դեպքում՝ դրանց համընդհանուր լուծումն ավելի հեշտ է», - հավելում է գյուղապետը:

Ծրագրի իրականացման կարևորագույն պայմաններից մեկն էլ՝ համաֆինանսավորման ապահովումն է, ինչն էլ պարտաճանաչորեն կատարվել է չկալովկացիների կողմից: Դա էլ, իր հերթին, ենթադրում է ծրագրի շարունակականության ապահովում, տեխնիկայի համալրում, իսկ հետագայում նաև՝ տարածաշրջանում սպանդանոցի, կաթի և մսի մթերման ու վերամշակման փոքր արտադրամասերի հիմնում:

Շուտով կսկսվի գյուղատնտեսական կենդանիների արտադրանքի պահվածքը: Այլևս չկա կենդանիներին ջրով ապահովելու նախկին մտահոգությունը: Գյուղացին հիմա նոր ծրագրերի մասին է մտորում. բարելավվել կենդանիների տոհմային հատկանիշները, փոխել՝ ցեղատեսակները, իրականացնել արհեստական սերմնավորում և այլն:

Թեև տարին սակավաջուր է, սակայն Չկալովկայի սարերում առատ ջուր կա, մաքուր ու առնորակ...



Նեյի Սահակյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

Քաղցրաշենն այսօր. հայացք դեպի մեր համայնքները

Արարատի մարզի Քաղցրաշեն գյուղը հիմնադրվել է 1928 թվականին, առաջին բնակիչները եկել են խոյ և Սալմաստ գավառներից, Վանից, Շապուխից, Մարտունու շրջանից: Նախկինում գյուղը կոչվել է Չորրորդ գյուղ, այնուհետև՝ Քաղցրաշեն:

Այսօր Քաղցրաշեն համայնքն ունի 3300-ից ավելի բնակչություն, նրանք հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ, աճեցնում են ծիրան, խաղող, դեղձ: Քաղցրաշեն համայնքում գործում է կաթնամթերքի արտադրություն, շուրջ 150 ընտանիքներ ունեն սառնարանային տնտեսություններ: Սառնարաններում պահվում են աճեցված մրգերը, բանջարեղենները, որոնք վաճառվում են Հայաստանում, նաև արտահանվում Ռուսաստանի Դաշնություն:



Քաղցրաշենի բնակչության հոգսերն ու խնդիրները, իրենց ամենօրյա աշխատանքով, աշխատում են լուծել՝ Քաղցրաշեն համայնքի ղեկավար Վալերիկ Գյուլամիրյանն ու գյուղապետարանի աշխատակիցները:

Վերջին տարիներին համայնքում գրեթե լուծվել են փողոցների լուսավորության, խմելու ու ոռոգման ջրերի խնդիրները, սակայն խնդիրներ կան՝ կապված կոյուղու սպասարկման աշխատանքների հետ: Մի քանի օր առաջ համայնքների ղեկավարները Արարատի մարզի մարզպետին առաջարկել են սպասարկումը կազմակերպել մարզպետարանի միջոցով:

Գյուղապետարանն իր բյուջեից, մաս-մաս, շուրջ 60 մլն. դրամ է հատկացնում «Սուրբ Վարդան» եկեղեցու կառուցման աշխատանքների համար: Աշխատանքներ են կատարվում երեխաների, պատանիների, երիտասարդների ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելու ուղղությամբ: Գյուղում գործում է դպրոց, մանկապարտեզ, երաժշտական դպրոց, մարզադպրոց:

Համայնքի բնակչությունը հպարտությամբ է խոսում իրենց գյուղի ազատ ոճի ըմբիշներ՝ աշխարհի եռակի չեմպիոն Արայիկ Գևորգյանի, Եվրոպայի չեմպիոններ՝ Նորայր Գևորգյանի և Ռուդիկ Մարգարյանի հաջողությունների մասին: Տասնյակ տարիներ առաջ, գյուղի ֆուտբոլային թիմը հանդես գալով «Սևան» կամավոր մարզական ընկերության կողմից՝ ՍՍՀՄ առաջնություններում գրավել է առաջին տեղը:

Քաղցրաշենի երաժշտական դպրոցը մինչև 1980թ. եղել է Նորաշենի մասնաճյուղը, 1997 թ.-ից երաժշտական դպրոցի տնօրեն է



Անահիտ Թովմասյանը: Այսօր դպրոցն ունի ժող. գործիքների բաժին՝ քանոն, դուդուկ, շվի, լարային բաժին՝ ջութակ, վոկալ բաժին՝ դաշնամուր, ժողովրդական և ժամանակակից պարեր: Երեխաներն իրենց ելույթներով մասնակցում են համայնքային, մարզային և հանրապետական տոնակատարություններին, միջոցառումներին. պարզևատրվել են դիպլոմներով, պատվոգրերով: Այժմ պատրաստվում են մասնակցելու Ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Իսկ քանոնահարուստ Լաուրա Սիմոնյանը կմասնակցի Գյումրիի միջազգային փառատոնին:

Համայնքի ղեկավարը և բնակչությունը մտահոգված են մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներով: Ներկայումս շուրջ 60 երեխաներ են հաճախում մանկապարտեզ, եթե հնարավոր լինի (ծրագրի միջոցով) վերանորոգման աշխատանքներ իրականացնել, ապա մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կհասնի 220-ի:

ԾՐԱԳԻՐ

ԾԻՐԱՆԻ ԳԵՆԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, «Ծիրանի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում» ծրագրի շրջանակներում, նախաձեռնել են կոլեկցիոն այգու հիմնում:

Ծրագրի նպատակն է՝ ստեղծել հայկական ծիրանենու կոլեկցիոն այգի՝ ծիրանի գենետիկ ռեսուրսների պահպանման, օգտագործման և մշակության զարգացման համար: Վերջինիս մի մասը ծառայելու է՝ որպես մայրուտ, և հասանելի է լինելու տնկանյութ արտադրողներին:

Վերջերս, այս ծրագրի շրջանակներում, կազմակերպվել էր սեմինար՝ կոլեկցիոն և ցուցադրական այգիների կառավարման վերաբերյալ, ինչպես նաև՝ ծիրանենիների էտելու միջազգային



Փորձի փոխանակում:

Սեմինարին ներկա էին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարարներ՝ Գառնիկ Պետրոսյանը և Սամվել Գալստյանը, Երկրագործության գիտական կենտրոնի և ԳԱՄԿ-երի տնօրեններ և մասնագետներ, «Հայկական միրգ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Հովհաննիսյանը, CARD հիմնադրամի տնօրեն Գագիկ Սարգսյանը, ներկայացուցիչներ, ծիրանենու այգիներ հիմնած այգետերեր, այգեգործներ և ֆերմերներ: Սեմինարը վարում էին Իտալիայից հրավիրված մասնագետներ՝ գիտությունների դոկտոր Դանիել Բասը և պրակտիկ-այգեգործ Ջորջիո Մորին:

Սեմինարի նպատակն էր՝ մասնակիցներին ծանոթացնել ցածրաճ ծիրանենու ծառերի ձևավորման, էտի աշխատանքներին՝ այդ թվում միջազգային փորձին, ինչպես նաև ծիրանենու այգու խնամքի, պարարտացման և բուժման աշխատանքներին:

Ծրագրի իրականացումը ՀՀ-ում, գյուղատնտեսության զարգացման առումով, շատ կարևոր է, այն ծիրանենու գենետիկ ռեսուրսները պահպանելուց բացի, երկրում կիթանի և կամրապա-



ղի նշված պտղի արտադրության կայուն հիմքերը: Ցուցադրական այգում լայնորեն ներկայացվել էր նաև նոր ագրոտեխնիկայի կիրառումը: Սեմինարի վերջում մասնակիցներն անձամբ հնարավորություն ստացան մասնակցել էտի աշխատանքներին:

Նշենք, որ կլոնային պատվաստակալների միջոցով ստացված ցածրաճ տնկիների դեպքում, հնարավոր կլինի մեկ հեկտար տարածքի վրա տնկել 600-ից մինչև 2800 ծառ: Այսպիսի այգիներում ծառերի և սաղարթի փոքր լինելու արդյունքում հեշտանում են էտի, բուժման և բերքահավաքի աշխատանքները: Հիմնելով նմանատիպ այգիներ՝ հնարավոր կլինի հանրապետությունում ավելացնել ծիրանի արտադրությունը, ինչպես նաև արտահանումը:

Ծիրանը Հայաստանում հիմնական բնամթերք է ինչպես վերամշակող, արտահանող կազմակերպությունների, այնպես էլ՝ երկրի բնակչության համար: Հայաստանում տարեցտարի ավելանում են ծիրանենու այգետարածքներն ու ծիրանի արտադրությունը:

Նարինե Անդրեասյան
Կոտայքի ԳԱՄԿ

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

«ԻՄ ԵՐԱԶԱՆՔՆ Է՛ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀՈՂԻ ՄՇԱԿԻ ՀԱՎԱՏՆ ՈՒ ՀՈՒՅՍԸ»

Նունե Սարուխանյանը 2004թ.-ից «Կանաչ արահեթ» ՀԿ-ի նախագահն է: Նունեն գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է, հեղինակ է 6 մենագրությունների, 36 գիրական և 47 գիրահանրամատչելի հոդվածների, որոնք վերաբերում են օրգանական գյուղատնտեսությանը, հարիկարնդեղեն մշակաբույսերին, կիտրոնի մշակությանը, վայրի ուրբեի բույսերի ու դեղաբույսերի ուսումնասիրություններին: «Գյուղական կյանքում կանանց սյրեղ-ձագործական միջոցը» մրցանակի 2012թ. 10 հաղթողներից մեկն է՝ աշխարհում՝ ընդլրված «Կանանց համաշխարհային զագաթնաժողով» հիմնադրամի (Շվեյցարիա) կողմից: Սպորտ ներկայացնում ենք Ագրոլուստի թերթի աշխարհային գրույցը փրկին Սարուխանյանի հետ:



Ինչպես առաջացավ գյուղատնտես դառնալու գաղափարը:

Երբ հիշում եմ մանկության տարիները, միայն հիմա եմ զգում, որ գյուղատնտեսի մասնագիտությունն իմ առաքելությունն է: Աղոտ հիշողություններ կան, որոնց իմաստը հիմա եմ հասկանում... Դեռ դպրոց չէի հաճախում, միշտ շատ վաղ էի արթնանում, ինչպես հիմա: Լույսը չբացված, վազում էի ծաղկանոց, և դեռ այդ ժամանակից ինձ հետաքրքիր էր, թե ինչպես են արևի ճառագայթները զուգընթաց, բացվում կակաչներն ու հիրիկները: Ականջս հարում էի այդ կակաչներին և կարծես ծայրեր էի լսում... Երբ հասակ առա, կրկին հետաքրքրվում էի բուսական աշխարհով: Ինձ անընդհատ մի հարց էր մտատանջում, ինչու՞ իմ տատն ու պապը, ծնողներս, մեր հարևանները, տարիներ շարունակ դժգոհ էին ստացված բերքից... Կարտոֆիլի հսկայածավալ տնկարկներ ունեինք, և ամեն տարվա վերջին դժգոհում էինք անբարենպաստ եղանակից, ամեն աշնանը, նույն խոտակցությունն էր «Որբան ցանեցինք, այնքան էլ՝ ստացանք», «Տարին կրկին բարենպաստ չէր...»: Դեռ այն ժամանակներից ես խորացվ էի ապրում, զգացի, որ ինչ որ բան այնպես չէ. 5-րդ դասարանից բուսաբանությունն անչափ հետաքրքրում էր ինձ, ցանկանում էի իմանալ բնության գաղտնիքները... Այդպես ճանապարհներն ինձ տարան գյուղատնտեսական ինստիտուտ:

Լինելով չափազանց զբաղված՝ ինչպես եք համատեղում ընտանիքն ու աշխատանքը:

Այդ առումով բախտս բերել է, քանի որ ամուսինս նույնպես գյուղատնտեսության ոլորտում է, ըմբռնումով է մոտենում իմ աշխատանքին և անվերջանալի գործուղումներին... Նա ինձ շատ է օգնում իր խորհուրդներով: Իհարկե, ընտանիքն, անշուշտ, տուժում է: Երևանում ապրելով հանդերձ, ամիսներով հնարավոր է, որ չտեսնեմ թոռնիկներին, մեկ էլ նկատում եմ, որ նրանք մեծացել են ու չեն հասկանում, թե ինչպես անցան տարիները... Սակայն, մյուս կողմից էլ՝ այսօր հարյուրավոր ֆերմերները, որոնց հետ համագործակցել եմ, կարծես թե դարձել են իմ ընտանիքի մի մասը:

ՏՈՆԱՎԱՃԱՌ

ԸՆԴՆԱՅՆԵԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Օրերս կայացավ կանանց նվիրված հերթական միջոցառումը. բացօթյա բարեգործական տոնավաճառ՝ նվիրված կանանց տոնին և Սուրբ Զատիկին: «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ն տոնավաճառին ներկայացրեց ծրագրի շահառու վեց կին-ֆերմերների՝ Տավուշի (Վերին կարմիր աղբյուր, Զորաթան և Տավուշ համայնքներ) և Սյունիքի (Դարբաս, Նորավան և Զարծիս համայնքներ) մարզերից:

տաղրանքը համայնքից և մարզից դուրս, ինչը հետագայում թույլ կտա ընդլայնելու տնտեսության և վաճառքի ծավալները՝ դրանով իսկ բարձրացնելով իրենց ընտանիքների բարեկե-



ցությունը: Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծրագրերում հատուկ ուշադրություն է դարձվում կանանց դերին, նրանց կարողությունների ու գիտելիքների զարգացմանը: Բացի իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական մթերքը ներկայացնելուց, մասնակիցները հնարավորություն ունեցան շփվելու նաև ներկա այլ մասնակիցների հետ, ծանոթանալու վերջիններիս գործունեությանը, ինչպես նաև ձեռք բերեցին փորձ և գիտելիքներ, որոնք հետագայում կկիրառեն գյուղատնտեսական արտադրանքի ծավալների և որակի բարելավման գործընթացում:

Նմանատիպ ծրագրերին մասնակցությունը հնարավորություն է տալիս բարձրացնելու կանանց դերը, վերջիններիս ներգրավվածությունը համայնքում իրականացվող սոցիալ-տնտեսական խնդիրների լուծարմանը, ինչպես նաև հարթակ է հանդիսանում փորձի փոխանակման և ճանաչում ձեռք բերելու համար: Հիշեցնենք, որ միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԿ):

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԳ

ՏԱՎԱՐԻ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում տավարի մսի շուրջ 70-75%-ը ստացվում է արու, մասամբ էլ՝ եգ մատղաշից, իսկ 20-25%-ը՝ խոտանված կովերից:

Մասցու մատղաշը կարելի է աճեցնել և բուել երկու տարբերակով՝ չափավոր և ինտենսիվ:

Չափավոր աճեցման և բուման դեպքում, դրանց կենդանի զանգվածը՝ միսն իրացնելիս, 18 ամսականում պետք է կազմի 400 կգ, օրական քաշաճը՝ 650-700 գ: Աճեցման այս տարբերակի դեպքում անհրաժեշտ է լայն չափով օգտագործել լեռնային արոտները, կազմակերպել արոտային բուում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տարեկանից բարձր հասակի մասցու արու մատղաշը, բարձր լեռնային արոտներում, տալիս է օրական 800-1000 գ քաշաճ՝ առանց լրացուցիչ կերակրման:

Արոտային շրջանի վերջին ամիսներին (օգոստոսի վերջերից), երբ արոտները սկսում են աստիճանաբար չորանալ, ցանկալի է բավոլ մատղաշին կերակրել լրացուցիչ կերերով (խտաքրած կեր, սիլոս և այլն) կամ դնել կարճատև (մոտ 2 ամիս) տևողությամբ ստացիոնար բուման մտուրային պայմաններում:

Արոտային գիրացման տակ դրվող ցուլիկներին անհրաժեշտ է ամորձատել՝ մինչև դրանց արոտային գիրացման դնելը՝ 15-20 օր առաջ կամ արոտային շրջանի առաջին օրերին:

Ինտենսիվ աճեցման և բուման դեպքում, մասցու մատղաշի ցանկալի տարիքը, միսն իրացնելիս, համարվում է 15-16 ամսականը՝ 400 կգ և 17-18 ամսականը՝ 450 կգ, կենդանի զանգվածով օրական քաշաճերը՝ 750-800 գ:

Ինտենսիվ աճեցումը կատարվում է ստացիոնար պահվածքի պայմաններում և ցուլիկներին, որպես կանոն, չեն ամորձատում: Կերի ծախսի յուրաքանչյուր մեկ կգ քաշաճի վրա, ամբողջ աճեցման ընթացքում, կարելի է սահմանել 7-8 կերի միավոր:

Ստորև (աղ. 1) բերված են Ռուսաստանի Դաշնության գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի /ВАСХНИЛ/ և համառուսաստանյան անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտի /ВИЖ/ կողմից առաջարկված մասցու մատղաշի կերակրման նորմաները:

Աղյուսակ 1

Table with 7 columns: Տարիք, ամիս; Կենդանի զանգվածը աճեցման շրջանի վերջին, կգ; Օրական միջին քաշաճը, գ; Տրվում է գլխին օրական; Կերի միավոր; Եներգետիկ կերի միավոր; Կերի միավոր; Գործարար, կգ; Մարմնի պլոտեին, գ

Մասցու մատղաշի աճեցումը պետք է կատարվի առավելագույն տնտեսությունում արտադրվող կոպիտ և հյութալի կերերի հաշվին: Կաթնային շրջանում անարատ և սերգատած կաթը պետք է օգտագործել նվազագույն քանակով (օգտվել հորթերի աճեցման այն սխեմաներից, որտեղ նախատեսված են ոչ մեծ քանակությամբ կաթ): Հնարավորինս պետք է օգտագործել կաթի փոխարինիչներ, կերախառնուրդներ, պանրի սիջուկ և այլ կերեր:

Մասցու կենդանիները նույնպես պետք է գտնվեն նորմալ, զոոհիգիենիկ պայմաններում: Ցանկալի է, որ մինչև 10-12 ամսական հասակը (աճեցման

շրջանում) նրանց պահել անջատ, խմբային վանդակներում՝ կահավորված անհատական բոջերով: Բուման շրջանում՝ 12-18 ամսականում, պահել կապած, առանց զբոսանքի հանելու:

Կերերով լավ ապահովված տնտեսություններում մասցու մատղաշը կարելի է պահել բացօթյա՝ բուման հրապարակներում կամ թեթև տիպի անասնաշենքերում:



Արտադրվող տավարի մսի հաշվեկշռում զգալի տեղ ունի հասակավոր տավարի, խոտանված կովերի միսը: Տնտեսապես ավելի ձեռնտու է մասցու խոտանված կովերին գիրացնել լեռնային արոտներում, իսկ անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ, ինտենսիվ բուել ստացիոնար պայմաններում՝ 1-2 ամիս տևողությամբ և նոր իրացնել միսը:

Աղյուսակ 2-ում բերված են խոտանված մսի տրվող 400-450 կգ քաշ ունեցող կովերի կերակրման նորմաները:

Աղյուսակ 2

Table with 4 columns: Ցուցանիշները; Բուման սկզբն. շրջանում; Բուման միջին շրջանում; Բուման վերջին շրջանում

Մսի տրվող խոտանված կովերը բուումից հետո պետք է ունենան բարձր սնվածություն, որն էլ կապահովի բարձր շահութաբերություն:

Տավարի մսի արտադրության ավելացման կարևոր պահուստ (ռեզերվ) է նաև ցածր կաթնատու կովերի արդյունաբերական տրամախաչումը նեղ մասնագիտացված (շարլիտ, լիմուզին, հերոֆորդ, աբերդին և այլ ցեղերի հետ):

Արդյունաբերական տրամախաչումը՝ որպես կենսաբանական մեթոդ, հիմնված հետերոզիսի երևույթի դրսևորման վրա, հնարավորություն է տալիս ապահովել տավարի մսի արտադրության արագ արդյունք՝ առանց լրացուցիչ ծախսեր կատարելու:

Կարևոր նշանակություն ունի նաև մասցու մատղաշի աճեցման և բուման մասնագիտացված ձեռնարկությունների ստեղծումը: Այն հնարավորություն կտա ցածրադիր գոտու նախիրները բեռնաթափել մասցու մատղաշի գլխաքանակից՝ ավելացնելով կաթի արտադրությունը քաղաքամերձ տնտեսություններում, ինչպես նաև բարձրացնել կովերի տեսակարար կշիռը նախիրներում: Մասցու մատղաշի աճեցման և բուման մասնագիտացված ձեռնարկությունների բացակայության պատճառով, գյուղացիական տնտեսությունները հաճախ սպանող են ելքաթակում փոքր հասակի, ցածր կենդանի զանգվածով մատղաշների, որի հետևանքով նվազում են տավարի մսի արտադրության պաշարները:

Պակաս կարևորություն չի ներկայացնում նաև կորուստների կրճատումը: Այս առումով էլ, կենդանիներին միսն իրացնելիս, ժամանակակից սպանողանոցների ստեղծմանը ձեռնամուխ է եղել գյուղատնտեսության նախարարությունը:

Խ. Սիմոնյան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Սիմոնյան, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԸ. ՎԵՐՋԻՆԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԷՐ

Վերջերս, Կոտայքի ԳԱՄԿ-ի 2015 թվականի գործունեության աշխատանքային պլանի համաձայն, Արմավանի տարածաշրջանի Կապուտան համայնքում անցկացվեց սեմինար: Սեմինարը վարում էր Կապուտան համայնքի գյուղատնտեսության խորհրդատու Հարություն Վարդանյանը: Ներկա էին ԳԱՄԿ-ի մասնագետներ և ֆերմերներ:

Սեմինարի թեմաներն էին՝ պտղատու այգիների գարնանային խնամքի և բուժման աշխատանքների կազմակերպում, հավերի 1-15 օրական ճտերի կերակրումը, պահվածքը և խնամքը, գյուղատնտեսական կենդանիների ծնի ընդունում, նորածին հորթերի խնամք, կենդանիների ճիճվային հիվանդություններ, պայքարի կազմակերպում, կոոպերացիայի ստեղծման սկզբունքներն ու առավելությունները: ԳԱՄԿ-ի մասնագետ Նարինե Անդրեասյանը ներկայացրեց կոոպերացիայի սկզբունքով աշխատանքների վարման, կոոպերացիայի կառավարման մեխանիզմների հետ կապված խնդիրները, պետության կողմից օժանդակվող ծրագրերը: Մասնագետները ծանոթացան նաև մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռք բերման նպատակով պետական աջակցության «Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման» (2007-2015թթ.) ծրագրին, Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման, «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» կարգի համաձայն, գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության վերաբերյալ նյութերին:

ԳԱՄԿ-ի մասնագետ Գ. Ավետիսյանը ներկայացրեց տեղեկություններ կենդանիների ճիճվային հիվանդությունների վերաբերյալ, իսկ Զ. Վարդանյանը ներկայացրեց Հայաստանում հիմնականում աճեցվող ձվատու հավերի մի շարք ցեղերի, կոոսների, նաև խառը հիբրիդների (Լոման սպիտակ, Լոման շագանակագույն, Հայսեքս, Հայլայն, Ադլերյան արծաթագույն, մասնակի՝ նաև Երևանյան հավերի սերունդների) վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև՝ գյուղացիական տնտեսություններում կատարվող հավերի թերի, չնորմավորված, չստուգված հատիկային կերերով կերակրումը: Սեմինարի ավարտին մասնակիցներին տրամադրվեցին ինչպես օրակարգում նշված, այնպես էլ այլ գյուղատնտեսական թեմաներով խորհրդատվական թերթիկներ:

Կոտայքի ԳԱՄԿ

ԽՄԵԼՈՒ ՆՈՐ ԶՐԱԳԻԾ ՎԱՐԴԱՔԱՐՈՒՄ

Վարդաքարի համայնքապետ Գալուստ Ավետիսյանի տեղեկացմամբ, «Հայքոմուդկոյոլի» ՓԲԸ-ի պարվերով և Ասիական Չարգացման Բանկի ֆինանսավորմամբ, Վարդաքար համայնքում կապարվելու են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման յուրջ աշխատանքները:

«Ըստ ներկայացված նախագծի, գյուղում կատարվելու է 7.460 կմ ընդհանուր երկարությամբ (40-160 մմ) տրամագծերի պոլիէթիլենի խողովակներով ջրաձեռքի կառուցում, 1.745 ընդհանուր երկարությամբ (32-20 մմ) տրամագծի պոլիէթիլենի խողովակներով մուտքաձեռքի կառուցում, անհատական տների համար՝ 200 ջրաչափական հորերի տեղադրում, երեք փականային կարգավորման հանգույցների, յոթ թաղված փականային հանգույցների կառուցում, ինչպես նաև իրականացվելու է մոտ 200 խորանարդ մետր տարողությամբ օրվա կարգավորման ջրամբարի վերանորոգում», - նշել է Վարդաքարի համայնքապետը:

Շիրակի ԳԱՄԿ

ԲԱՅԱՅԱՅՏՎԱԾ ՓԱՍՏԵՐ

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ ԿԵՆԴԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԸ ԵՎ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տասնամյակներում, տավարի հետ տարվող սելեկցիոն աշխատանքի շնորհիվ, զգալիորեն բարձրացել է դրանց կաթնատվությունը: Միաժամանակ այդպիսի կովն ավելի խոշոր ու ծանր է դարձել, այսինքն՝ ավելի շատ կեր է ուտում, որը բոլոր կերատեսակների առումով գնալով թանկանում է, հատկապես՝ կոմբինացված կերերի: Արդյո՞ք կարելի է այդ ճանապարհով շարունակել գնալ, և եթե այո, ապա՝ մինչև ու՞ր:

Ինչպես ցույց են տվել Գյուղատնտեսական կենդանիների կենսաբանության Լեյբնիցի ինստիտուտում (ԳԴՀ) պրոֆ. Վիլֆրիդ Բրադեյի ղեկավարությամբ տարվող հետազոտությունները, օպտիմումի կանոնն այս դեպքով ապացուցում է իր համընդհանուր լինելը: Չափազանց խոշոր կովերը՝ 700 կգ և ավելի քաշ ունեցող, սկսում են անարդյունավետ օգտագործել կերը, քանի



որ օժանդակ էներգիայի ավելի մեծ պահանջ ունեն, իսկ 650 կիլոգրամից պակաս կշռող կովերը դեռ չունեն բավարար հզորություն՝ անհրաժեշտ ծավալի մեթաբոլիզմ ապահովելու համար:

Սա լավ ըմբռնելու համար անհրաժեշտ են հետազոտողների բացահայտած մի քանի հանգուցային փաստեր ևս. նախ՝ մեթաբոլիկ զանգվածի մեկ կիլոգրամով ավելանալու դեպքում, Էներգիայի այն բաժինը, որը ծախսվում է կենսապահովման համար, ավելանում է 0,3 Մեգա Ջոուլով: Եվ որպեսզի ավելի լավ կերակրելով և կենդանու զանգվածը՝ օրինակ՝ 100 կիլոգրամով բարձրացնելով, կարողանանք մեր կատարած ծախսերը հետ բերել, ապա կովն իր կաթնատվությունը պետք է բարձրացնի 12-13 %-ով: Բրադեյի հետազոտությունները ցույց են տվել նաև, որ կովի կենդանի զանգվածի մի ցենտներով ավելացնելու համար, նրան պետք է կերակրել օրական, չոր քաշի հաշվով, 1,3 կիլոգրամով ավելի: Իսկ արդյունավետությունը մեկ կիլոգրամով բարձրացնելու համար, չոր քաշի հաշվով, կերաբաժինը ևս պետք է ավելացվի 0,22 կիլոգրամով: Եվ որքան մեծանում է կենդանու զանգվածն ու կաթնատվությունը, որը տեղի է ունենում խտացրած կերերի հաշին, այնքան կերաբաժնում մեծանում է խտացրած կերերի բաժինը:

Մեկ միլիոն կիլոգրամ կաթի համար կատարված հաշվարկները ցույց են տվել, որ ավելի խոշոր՝ 750 կգ կենդանի զանգված ունեցող կովերի նախիրը, կաթի նույն քանակի համար, ծախսում է 100 գ խտացրած կեր ավելի, քան՝ ավելի թեթև՝ 650 կիլոգրամանոց կովերի նախիրը:

Բացի նրանից, որ հետազոտություններով պարզվել է կաթնատու կովերի օպտիմալ կենդանի զանգվածը, որը շատ կարևոր է ֆերմերների համար, հետազոտողները սելեկցիոներներին, փաստորեն, հանձնարարել են, որ հետագա աշխատանքներում նրանք ավելի կենտրոնանան արդյունավետության վրա (այլ ոչ թե ուղղակի քաշի ավելացման)՝ միաժամանակ հնարավորինս նվազեցնելով կախվածությունը խտացրած կերերից, քանի որ թանկացումն առավելապես վերաբերում է դրանց կազմը հիմնականում ներկայացնող սոյային և ցորենին:

Նշված արդյունքներն օգտակար կլինեն հանրապետության անասնապահությամբ զբաղվող ֆերմերների համար, ովքեր հնարավորություն են ունեցել ներկրել, ընդհանուր առմամբ, 2500 գլխի հասնող արտասահմանյան բարձրարդյունավետ կովեր՝ ապահովելով բնակչությանը տարեկան մոտ 15 մլն կգ կաթով: Սակայն, երկրի կաթի արտադրության Եապես ավելացման համար, ավելի նպատակահարմար է ուշադրությունը կենտրոնացնել տեղական կովերի գենետիկական ռեսուրսի բարելավման վրա, որն իրականացվում է ազնվացող ցուլերից վերցրած սերմնահեղուկով արհեստական սերմնավորման միջոցով. դրանք թիվը տարեկան հասցվել է 20 հազարի, ինչը նշանակում է, որ այժմ հանրապետության խոշորի նախիրը բարելավվում է տարեկան 5%-ով: Սա վատ ցուցանիշ չէ, հատկապես, եթե հաշվի առնվեն աճի տեմպերը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈՒԵՋՆ ԱՆՄԱՍՆ ՉԻ ՄՆԱՑԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻՑ. ՔՈՒԵՋՈՒՄ ԼՍԵԼ ԵՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջն այն ուսումնական հաստատություններից է, որտեղ ուսանողի, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում առաջնահերթությունը տրվում է նրա մտահորիզոնի ընդլայնմանը, պատմական փաստերի նորոյա մեկնաբանման միջոցով ազգային ինքնագիտակցության ձևավորմանը:

Քոլեջում վերջերս՝ Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ, կազմակերպվել էր հերթական բաց դասախոսություն՝ «Չայոց ցեղասպանությունը և հայոց պահանջատիրության իրավական հիմքերը» խորագրով: Բանախոսը նշանավոր պատմաբան, դիվանագետ, քաղաքական-հասարակական գործիչ, «Մոդուս վիվենդի» կենտրոնի հիմնադիր նախագահ Արա Պապյանն էր:

Ներկայացնելով հյուրին՝ քոլեջի տնօրեն Ռ. Թովմասյանը նրան բնութագրեց մեկ արտահայտությամբ՝ «Երկաթի հայորդի», որը, լինելով 33 արտակարգ և լիազոր դեսպան Կանադայում, ինչպես նաև ներկայացնելով Չայաստանը աշխարհի շուրջ 4 երկրներում, իր բեղմնավոր գործունեությունը բացառապես նվիրել է նվիրում է ազգի գերագույն խնդիրների լուծմանը:

Ա. Պապյանը, երախտագիտություն հայտնելով իրավերի և իրեն ընձեռած հնարավորության համար, դասախոսություն է կարդացել ներկաների համար: Դասախոսության վերջում՝ խոսքն ուղղելով քոլեջի ուսանողներին՝ Ա. Պապյանը կոչ է արել ավելի հետևողական լինել հայոց պահանջատիրության նկատմամբ՝ շեշտը դնելով ցեղասպանության հետևանքների վերացման իրավական հիմքերի վրա:

Քոլեջի տնօրեն Ռ. Թովմասյանը երախտագիտություն հայտնեց հյուրին՝ ակադեմիական ու ուսանելի դասախոսության համար և առաջարկեց ուսանողներից ընթերցել Ա. Պապյանի գիրքը և հետևել նրա ազգանվեր գործին:

Է. ՄԽԵՅԱՆ
Քոլեջի դասախոս

ՀԱՍՍՅՆՔԱՅԻՆ

ԳՅՈՒՂՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզի սահմանապահ Կիրանցում, գրեթե յուրաքանչյուր տարի, բնակչության աճ է գրանցվում: Այս առումով համայնքի ղեկավար Հմայակ Նազարյանը հպարտությամբ նշում է. «Մեր համայնքից չեն արտագաղթում»: Պատճառը, իհարկե, չի ասում... պարզ է, որ այս համայնքը գրավիչ է շատ առումներով: Այսպես՝ ասֆալտապատ ճանապարհ, բարեկարգ գյուղապետարան, կոոպերատիվների առկայություն...



Ապրիլ ամսում ջերմատնային 6 տնտեսություն կհիմնվի, 5 հա թզուկային այգի՝ կաթիլային համակարգի տեղադրմամբ: Կառուցվում է 4 կմ ոռոգման ջրագիծ, և ոռոգելի կդառնա 120 հա հողատարածք: Ջուգահեռ վերանորոգվում է նաև խմելու ջրի ներքին ցանցը: Շինարարությունը կավարտվի մայիսին: Արդյունքում՝ կզարգանա այգեգործությունը: Ստեղծված հնարավորությունների շնորհիվ, 15 երիտասարդ ընտանիքների գյուղում մնալու խնդիրը ևս կլուծվի:

Օրեցօր նոր նախաձեռնություններ են ծնվում՝ գյուղն ավելի բարեկենս ու բարեկարգ դարձնելու ուղղությամբ, և դրանց հեղինակը համայնքի հոգսերով միշտ մտահոգ Հմայակ Նազարյանն է:

Տավուշի մարզի սահմանամերձ Վազաշենի մի խումբ բնակիչների հրավերով, վերջերս համայնք էին այցելել ԳԱՄԿ-ի տնօրենը և աշխատակիցներ: Հավաքի նպատակն էր՝ մասնակիցներին ծանոթացնել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և կառավարման սկզբունքներին: Քննարկվեցին Վազաշեն համայնքում գյուղատնտեսության զարգացման հնարավոր ուղղությունների հետ կապված հարցեր և առկա խնդիրներ, այդ թվում՝ ոռոգման ջրի և երկարաժամկետ գյուղատնտեսական վարկերի, որոնց լուծումներն զգալիորեն կխթանեն գյուղատնտեսության զարգացումը:

Գյուղատնտեսության զարգացման գործում կարևորվեցին նաև կոլեկտիվ մոտեցումները, այդ թվում՝ կոոպերատիվների ստեղծումը: Քննարկվեց նաև համայնքում գյուղատնտեսական կոոպերատիվի ստեղծման հնարավորությունը:

Որոշվեց ստեղծել նախաձեռնող խումբ, որը կկազմակերպի քննարկումներ, և համապատասխան պայմանների առկայության դեպքում, կիրավորի կոոպերատիվի հիմնադիր ժողովը:

Տարթևիկ Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

ՀԵՏԱՐՈՒՔԻՐ Է...

ՕԳՏԱԿԱՐ ԲՈՒՅՍ ՄԱՂԱԴԱՆՈՍԸ

Մաղաղանոսը կամ ազգաբնիկը, նեխուրազգիների (հովանոցավորներ) ընտանիքին պատկանող միամյա կամ երկամյա բույսեր...



միջոց: Նրանով բուծել են երկկամի քարային, միգայարկի, ինչպես նաև շագանակագեղձի հիվանդությունները:

1. Տեսողություն և ատամներ

Մաղաղանոսը մեծ քանակությամբ A վիտամին է պարունակում, որի շնորհիվ այն շատ օգտակար է տեսողության համար...

2. Արյուն

100 գրամ մաղաղանոսը պարունակում է 5.5 մգ երկաթ, ուստի այն պարզապես անհրաժեշտ է անեմիա ունեցող մարդկանց համար...

3. Ճնշում

Քչերին է հայտնի, որ մաղաղանոսը նաև օգնում է կարգավորել ճնշումը: Մաղաղանոսը մեծ քանակությամբ կալիում է պարունակում (100 գրամ մաղաղանոսում մեկ գրամ), որը միգամուղային ազդեցություն ունի և օգնում է իջեցնել ճնշումը...

4. Իմունիտետ

Մաղաղանոսը հարուստ է C վիտամինով, որն օգնում է ամրապնդելու օրգանիզմը և պաշտպանում է բջիջները վնասումից: Ավելին՝ A, C և E վիտամին-հակաօքսիդանտները պաշտպանում են բջիջները վաղաժամ ծերացումից: Իսկ ֆոլաթթվի մեծ քանակության առկայությունն օգնում է պահպանել բջիջների բաժանումն ու թարմացումը, որը հատկապես կարևոր է հղի կանանց:

5. Նյութափոխանակություն

Մաղաղանոսը հարուստ է նաև քջանյութով, որն օգնում է օրգանիզմից դուրս հանել տոքսինները և արագացնել նյութափոխանակությունը: Հենց այս հատկանիշի շնորհիվ մաղաղանոսն օգնում է նիհարելու դեպքում: Հարկ է նաև նշել, որ մաղաղանոսը պահպանում է իր օգտակար հատկանիշները մեծ մասը ոչ միայն սառեցման և չորացման, այլև եփելու դեպքում: Ուստի, ծմռանը աղցանների մեջ կարելի է չորացրած մաղաղանոս ավելացնել, որն ամեն դեպքում, շատ օգտակար կլինի:

Կիվի կամ չինական ակտինիդիա

Կիվին (Actinidia) ակտինիդիա ցեղաբանական ընտանիքի բույս է: Հայտնաբերվել է Չինաստանում՝ ավելի քան 700 տարի առաջ: Գիտականորեն այս բույսը «Չինական ակտինիդիա» է կոչվում: Կիվին ծառանման վայրի լիանա է, մի փոքր նման ծառի, բայց ծառ չէ: Այն հաճախ համարում են միրգ, բայց ավելի շուրջ հապապրող է, քանի որ այն աճում է ոչ թե ծառի, այլ լիանայի վրա:

Կիվին Նոր Զելանդիա է բերվել 20-րդ դարի սկզբին: Բույսն իր անունը ստացել է իր պտղի և անթև, գորշ, մազանման փետուրներով կիվի թռչնի արտաքին նմանության շնորհիվ: (Կիվի թռչունը բնակվում է Նոր Զելանդիայում, հավի մեծություն ունի, քաշը՝ 1-4 կգ: Թռչունը գիշերները սնվում է տարբեր միջատներով և պտուղներով: Կիվին որսի է դուրս գալիս մարմնուտին, այն Նոր Զելանդիայի ոչ պաշտոնական խորհրդանիշն է: Առաջին ընկերությունը, որը սկսել է իրականացնել կիվի մրգի վաճառքը շուկայում, անվանվել է կիվի (Kiwi): Նորգելանդացիներին նույնպես կատակով անվանում են կիվի:



այն էլ՝ հիմնականում ամռանը: Երբեմն հանդիպում է դեղին կեղևով կիվի, որն անվանում են «գոլդ կիվի» («Gold kiwi»):

Կիվիի օգտակար հատկությունները

Կիվին իրավամբ համարվում է վիտամինային ռուս, քանի որ պարունակում է մրգերի և բանջարեղենի համար ռեկորդային քանակության վիտամիններ և հանքային նյութեր: Այս խավիտ կանաչ գնդիկը հարուստ է հատկապես վիտամին C-ով: Նորվեգացի գիտնականները կիվիի մեջ եզակի նյութ են հայտնաբերել, որին դեռ անուն չեն տվել. այն այրում է զարկերակի ճարպային պաշարիչները: Որպես հետևանք՝ նվազում է թրոմբոզի առաջացման վտանգը: Ինչպես ենթադրում են սրտաբանները, կիվիի պտուղները կարող են դառնալ անսպիրիտի այլընտրանքային օգտակար տարրերակ: Կալիումը նույնպես կիվիի անբաժանելի բաղադրիչներից է, որը կարգա-

վորում է սրտանոթային համակարգի աշխատանքը: Կիվին վերացնում է հիպերտոնիան, մկանային թուլությունը, քնկոտությունը և ամենակարևորը՝ կանխում է քաղցկեղի զարգացումը:

Կիվին հիանալի մաքրում է մաշկը և միևնույն ժամանակ այն շատ հագեցնող է իր վիտամիններով: Բուժական-կոսմետիկ նպատակներով կիվիից դիմակներ են պատրաստում: Կիվի է առաջարկվում մարզիկներին՝ որպես բնական խթանիչ ու մարզումներից հետո էներգիան վերականգնելու աղբյուր:

Կիվին դիետիկ մթերք է համարվում. առաջարկվում է նաև ավելորդ քաշ ունեցողներին: Մի հետաքրքիր հատկությամբ էլ է օժտված այս հրաշք միրգը. որոշ մասնագետներ վստահեցնում են, որ կիվին կանխում է վաղաժամ ալեհերությունը՝ նրա մեջ առկա մագնեզիումի շնորհիվ և, բացի այդ, մագնիսն բնական փայլ է հաղորդում: Կիվին շատ լավ է համադրվում մսեղենի, պանրի, ձկնեղենի հետ, դրանով մշակված և պատրաստված մսամթերքը յուրահատուկ համ ունի:

Հայերը հազարամյակներ շարունակ ապրել են իրենց բնօրրանում, սնվել այս վայրերին բնորոշ բնամթերքով, որը գենետիկո-



րեն տարբեր է ներմուծվող տարաշխարհիկ պտուղ-բանջարեղենից: Երբեմն նորամուտ սնունդը կարող է նաև ավելի ռեակցիաների պատճառ դառնալ:

Ինչ վերաբերում է երեխաներին, ապա պետք է նրանց սննդակարգում կիվի ավելացնել ռիսկոսություն ունեցնելով երեխայի ռեակցիային:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Advertisement for Agronews 2015. Includes statistics for circulation and subscription data for various editions.

Footer for Agronews with contact information, address, and website details.